
ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ

ՂԱՐԻՔՅԱՆ Դ. Լ.

Տարազ երևույթին դիմելու արդիականությունը պայմանավորված է դրա բովանդակային-անփոփոխ բնութագրիչների բացահայտման անհրաժեշտությամբ: Հենց դրանք են թույլ տալիս հստակեցնելու և որոշելու տարազի օգտահակ և խորհրդանշական գործառույթների ներդաշնակ գույակցումը, այդ մշակութային բարդ երևույթի հատկանշականությունը և գործողության առանձնահատկությունը:

Ազգային տարազի ծագումնաբանության խնդիրներին նվիրված բազմաթիվ և բազմակողմանի հետազոտություններ են արված մշակույթի ու գիտության տարբեր բնագավառներում: Ցավոք, արվեստաբանական հետազոտություններում, «համակարգային մոտեցման» տեսանկյունից, հպանցիկ տեղ է հատկացված ազգային տարազներին:

Հասարակական գիտությունների ուսումնասիրման հարացույցի ձևավորման գործընթացում հիշարժան են առանձնապես Է. Մարգարյանի գիտական աշխատություններն ու նորարարական մոտեցումները՝ սկսած դեռևս անցած դարի 60-ական թվականներից: Նա մշակել է այնպիսի հայեցակարգեր, որոնցում **հասարակությունը** հանդես է գալիս որպես համընդհանուր հարմարվողական-հարմարեցնող համակարգ, մարդկանց գործունեությունը՝ կենդանի համակարգերի ակտիվության առանձնահատուկ տարատեսակ, որն ուղղորդվում է տեղեկատվության միջոցով, իսկ **մշակույթը**՝ մարդու գործունեության համընդհանուր վերկենսաբանական միջոց (տեխնոլոգիա): Հեղինակի աշխատություններում մշակույթը դիտարկվում է որպես **ինքնակազմակերպվող** համակարգ, որն, իր հերթին, **սոցիալական** ինքնակազմավորման յուրահատուկ տարատեսակ է: 1970-ական թթ. երկրորդ կեսից Է. Մարգարյանի, Ս. Հարությունովի և Յու. Մկրտումյանի համատեղ հետազոտությունները հիմք են դարձել Խորհրդային Միությունում **ազգագրամշակութաբանության** ձևավորման համար:

Ռուս անվանի գիտնական Մ. Կազանը ևս, հենվելով նույն «համակարգային մոտեցման» մեթոդաբանության վրա, առաջարկում է մշակույթի պատմության ուսումնասիրման մեթոդներն ու սկզբունքները դիտարկել սիներգետիկ տեսանկյունից: Նա առաջ է քաշում այն դրույթը, ըստ որի, մշակույթը մարդու

¹ Маркарян С. А. Вопросы системного исследования общества. Знание, М., 1972, с. 36-38.

գործունեության ամենաբարձր է, և կեցության «բնություն-հասարակություն-մարդ» եռամասնական կառուցվածքի տարրալուծումը հանգեցնում է մշակութային սահմանմանը՝ որպես «մարդու կողմից հասարակության օրենքներով բնության կերպարանավորում»²:

Նշված հեղինակների դիրքորոշումները առանցքային դարձան՝ կյանքի կոչելով այնպիսի հայեցակարգ, որը բացահայտում է մշակույթը՝ որպես բաց համակարգ, որի ներքին և արտաքին գործարկումը, ինչպես նաև կառուցվածքային կազմակերպման սկզբունքները սահմանվում են ոչ թե դրսից, այլ ներսից:

Փորձենք վերը նշված «համակարգային մոտեցմամբ» ներկայացնել **ազգային տարազ** հասկացության ընդհանրություններն ու առանձնահատկությունները, կառուցվածքային-գործնական հատկանիշները, տարածաժամանակային փոփոխությունները կեցության «բնություն-հասարակություն-մարդ» ենթահամակարգերի փոխգործության համատեքստում: Տարրալուծվող բաղադրիչների փոխադարձ կապը կարելի է ներկայացնել հետևյալ հերթականությամբ. **1. Մշակույթ-Ավանդույթ-Տարազ, 2. Տարազը պատմության համատեքստում, 3. Տարազի կառուցվածքային-գործնական և խորհրդանշական որոշ առանձնահատկություններ, 4. Ազգային տարազ, 5. Հայկական տարազ:**

1. Մշակույթ-Ավանդույթ-Տարազ: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ՅՈՒ. Պրոկոպենկոյի աշխատանքում³ ևս մշակույթը ներկայացված է ամբողջական, զարգացող և բաց համակարգի տեսքով, որի զարգացումը տեղի է ունենում **ավանդույթների** պահպանման միջոցով, որը մշակութային ձևերին տալիս է կայունություն և նորարարությունների ներդրման հնարավորություն, որն էլ մշակույթը դարձնում է ճկուն ու շարժունակ: Վերջիններս մեկ-երկու սերունդների ընթացքում վերածվում են ավանդույթի: «Մշակութային ավանդույթ» ասելով՝ պետք է հասկանալ «մարդկանց սոցիալապես կազմակերպված խմբակային փորձի կարծրատիպացում»: Այն ներառում է սովորույթները, արարողակարգերը, տեխնիկական հմտությունները, ինչպես նաև կանոնակարգվածությունը արտադրությունում և արվեստում:

² Каган М. С. *Философия культуры. Учебное пособие*, СПб., 1996, с. 33-34.

³ Прокопенко Ю. А. *Этнокультурные связи оседлых и кочевых народов центрального предкавказья во второй половине I тыс. до н.э.* (Автореф. дисс. на соискание ученой степени докт. ист. наук, М., 2006, с. 38).

Օ. Բակշանայի հետազոտությունը⁴ արժեքավոր է նրանով, որ նախ և առաջ հիմնավորում է **ավանդույթի** բնույթի վերլուծության անհրաժեշտությունը **ազգային տարազի** զարգացման մշակութային-պատմական տեսանկյունից և բացահայտում ժամանակակից մշակույթի ձևավորման վրա հազուստի ազդեցությունը: Դիտարկվում է այն հարցը, որ ավանդույթը իրոք ազգային-գեղարվեստական մշակույթի տեսության գլխավոր հիմնախնդիրներից է:

Ըստ Յա. Բիստրովայի, տարազի գոյությունը մշակույթում բազմազան է: Տարազը միաժամանակ և՛ մարդկային գործունեության արդյունք է, և՛ դրա իրականացման միջոց⁵: Այդ տեսանկյունից այն կարող է տարբեր կերպով ընդգրկվել տարատեսակ մշակութաբանական և գիտական հատուկ տեսություններում՝ հանդես գալով որպես կամ վերլուծության առարկա, կամ կառուցվածքային, գնահատական տվող, գոյութենական, գոյաբանական հասկացություն, ինչպես նաև մարդկային աշխարհընկալման և վարքագծի սուբյեկտիվ-այլընտրանքային բաղադրիչ:

Միաժամանակ, պետք է նշել, որ տարազներին նվիրված գիտական հետազոտությունները սակավաթիվ են, և, բացի այդ, հիմնարար ուսումնասիրություններ չեն կատարվել տարազի և կերպարվեստի, մասնավորապես նկարչության ծագումնաբանական և հետագա զարգացման օրինաչափությունների ընդհանրության և փոխներգործության ուղղությամբ:

2. Տարազը պատմության համատեքստում: Ըստ Ս. Վանկովիչի, տարազը՝ որպես առարկայական աշխարհի բաղկացուցիչ մաս և ուղղակիորեն կապված լինելով մարդու հետ, հայրենական մշակույթում առավել ամբողջական է արտացոլում պատմականության ձևավորման գործընթացը⁶:

Ճ. Կոմիսարժևսկու կարծիքով, տարազի պատմությունը կապված է ոչ միայն արվեստի, այլև ազգագրության և փիլիսոփայության հետ: Այդ պատմության ուսումնասիրությունը մեզ տալիս է ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ մահացած ազգերի բարքերի և սովորույթների իմացության բանալին⁷: Ըստ նրանց հազուստի գունավորման ձևի, գործվածքի, մենք իմանում ենք դրանց գեղարվեստական և արդյունաբերական զարգացման աստիճանը, ձևվածքի փոփոխությունները,

⁴ Бакшаева О. А. Традиции в историко-культурном развитии народного костюма (Автореф. дисс. на соискание ученой степени канд. философских наук, Нижний Новгород, 2007, с. 24).

⁵ Быстрова Я. В. Символические функции костюма в культуре (Автореф. дисс. на соискание ученой степени канд. философских наук, Великий Новгород, 2003, с. 18).

⁶ Ванькович С. М. Костюм периода историзма (Автореф. диссертации на соискание ученой степени канд. культурологии, СПб., 2001, с. 21).

⁷ Комиссаржевский Ф. Ф. История костюма, М., 2005, с. 7-8.

գույների համակցությունները, մի ժողովրդի տարազի ազդեցությունը մյուսի հագուստի վրա. այդ ամենը մեզ հնարավորություն է ընձեռում նկատել նրանց զարգացման կամ անկման ուղին: Կրոնը, արվեստը, փիլիսոփայական ուսմունքները ազդում են մարդու արտաքինի վրա, իսկ տարազով միշտ կարող ենք պատկերացում կազմել տվյալ դարաշրջանում այդ մշակութային շարժիչ ուժերի մասին: Այսպիսով, տարազում արտացոլվում է յուրաքանչյուր ժողովրդի մտավոր և հոգևոր կյանքի ողջ կերտ-վածքը և նրա փոխկապվածությունը ուրիշ ժողովուրդների հետ:

Տարազը կրում է ոչ միայն առանձին անհատի, այլև ազգի, ժողովրդի և նույնիսկ մի ամբողջ դարաշրջանի պատկերավոր բնութագիրը: Տարազը անձի իր մարմնի հանդեպ ունեցած մշակութապես անհրաժեշտ այն բաղկացուցիչն է, որը «սոցիալականացնում է» մարդու անհատական մարմինը, միաժամանակ՝ «անհատակա-նացնում» նրա հավաքական մարմինը:

XX դարը ձևավորեց նոր տեսանկյուն ժամանակակից հագուստի և տարազի վերաբերյալ, որում արտահայտվում են հետարդիականության գեղագիտության հատկանշական գծերը՝ հայացք աշխարհին՝ որպես հատվածական բազմազանություն, հատվածականություն, որը կարող է լինել ազգային տարազի մաս, զարդ, զարդարանք:

3. Տարազի կառուցվածքային-գործառնական և խորհրդանշական որոշ առանձնահատկություններ: Ինչպես նշում է Մ. Մերցալովան, գոյություն ունենալով և ձևափոխվելով մարդկանցից անբաժան, լինելով նյութական մշակույթի առարկաներից ամենամոտը՝ տարազը սկսեց կատարել բազմաթիվ՝ և՛ ուղղակի, և՛ անուղից, ավելի նուրբ, հազիվ նշմարվող տրամադրություն ստեղծող, սերտ գործառնություն⁸: Մարդու և հագուստի միջև այդ հոգեբանական կապը ծագել է շատ վաղուց. տարբեր ժամանակաշրջաններում հագուստը ունեցել է իր ձևը, գունավորումը և ազդել մարդու արտաքին կերպարի ձևավորման վրա:

«Տարազ» հասկացությունը առավել ծավալուն է, քան «հագուստը», քանի որ տարազը բնույթով միշտ էլ հագուստ է, իսկ հագուստը ոչ միշտ կարող է լինել տարազ: Այլ կերպ ասած՝ զգեստ-հագուստը ծածկում է մարմինը, մինչդեռ զգեստ-տարազը անհատականացնում է առանձին մարդուն իր նմանների մեջ և արտաքինապես տարբերակում հասարակական շերտերը՝ ըստ դասակարգային, նյութական, մասնագիտական կամ այլ բնութագրիչների:

Տարազն ու հագուստը առարկայորեն կարող են համընկնել, սակայն եթե առաջին պլան են մղվում սպառողական գործառնությունները, ապա խոսքը հագուստի

⁸ Мерцалова М. Н. Костюм разных времен и народов, т. 1, М., 1993, с. 12-13.

մասին է, իսկ եթե ուշադրության կենտրոնում է հայտնվում խորհրդանիշը, ապա պետք է խոսել արդեն տարազի մասին:

Տարազի խորհրդանշական գործառույթի վերլուծությունը նոր տեսակետների հեռանկար է բացում գեղագիտության և մշակութաբանության բազմաթիվ ավանդական հիմնախնդիրների առջև և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Գ. Չաբրոդինան, ուսումնասիրելով և վերլուծելով ճարտարապետության, ինչպես նաև տարազի ձևերում խորհրդանիշների ծագումն ու դրսևորումները գեղարվեստական-պատկերավոր կառուցվածքների մակարդակով՝ սկսած Հին Եգիպտոսի ճարտարա-պետությունից, ավարտած բարոկկո ոճով, առաջարկում է հետազոտության մեթոդ, որը հնարավորություն է տալիս ի հայտ բերել ճարտարապետության և տարազի գեղարվեստական պատկերների միասնական խորհրդանշական կառուցվածքը⁹:

Հաստատված է, որ տարազի ձևի փոփոխությունը կապված է որոշակի փուլայնության հետ: Փուլը, որի ընթացքում ամբողջապես համալրվում է դրա ձևը, կազմում է 21-24 տարի: Գոյություն ունեն նաև 3, 8, 13, 34, 55 տարի տևողությամբ փուլեր, որոնց սահմաններում զարգանում են ինչ-որ մասեր, ձևեր, նախշեր կամ գործ-վածքի որևէ կառուցվածք:

4. Ազգային տարազ: Տարածաժամանակային խճապատկերի վրա պատմա-մշակութային նմանատիպ ժառանգություն է թողել նաև **ազգային տարազը:** Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ այն կապված է որևէ հանրային սովորույթի հետ և բնորոշում է սովյալ դարաշրջանը, ոճը, միաժամանակ՝ հազուստը կրելու ձևն ու եղանակը:

Ն. Բուդուրի, Ֆ. Կոմիսարժևսկու, Մ. Մերցալովայի, ինչպես նաև Առաքել Պատրիկի հետազոտություններում արձանագրվում է այն միտքը, որ տարազի ծագումնաբանական զարգացումը մարդկության ծագումնաբանական համատեքստում ընթացել է նմանատիպ օրինաչափությամբ:

Ազգային տարազում կենտրոնացած են ժողովրդական գիտակցության, նրա սոցիալական, բարոյական, կրոնական պատկերացումների, բարոյագիտական իդեալների, ապրելակերպի առավել կարևոր գծերը և հատկանիշները, և ոչ թե այն լոկ հաղորդում է մարդու ազգային և տարածաշրջանային պատկանելության,

⁹ Забродина Г. Д. Синергия архитектуры и костюма в пространстве культуры (Автореф. дисс. на соискание ученой степени канд. культурологии, Саратов, 2003, с. 7).

տարիքի ու սեռի մասին: Տարազի բազմագործառնության ազդեցությունը առավել ցայտուն նկատվում է թատերական արվեստի համակարգում:

Ն. Էրթյուրկը իր հետազոտությունում նշում է, որ արևելյան ավանդական տարազի պատմության, առավել ևս տեսության մասին դեռևս ոչինչ չի գրվել¹⁰: Հանրամատչելի շատ հրատարակությունների հեղինակներ հաճախ շփոթում են տարազի պատմությունը նորաձևության պատմության հետ՝ նրա ներկա հասկացողության առումով: Դրա հետևանքով արևելյան տարազի, մասնավորապես օսմանյանի մասին բոլոր պատկերացումները արտահայտվում են նշան-պատկեր հավաքածուի տեսքով (չալմա, խալաթ, չադրա և այլն):

Ուսումնասիրողներն ու արվեստագետները, որոնք օգտվում են տարազի պատմության համընդհանուր հանրագիտարաններից, կարող են ոչ ճշգրիտ տեղեկություններ ստանալ: Օրինակ, որպես թրքուհու ավանդական տարազ՝ հաճախ ներկայացվում են հայուհիների կամ հույն կանանց հագուստներ, որոնք ապրել են Օսմանյան կայսրության տարածքում:

Մ. Շատկովսկայան իր հետազոտությունում արտահայտում է հետևյալ միտքը. «Կարևոր է նշել, որ առանց բնօրինակների հետ անմիջական շփման անհնար է ավանդական ազգային տարազի համակողմանի ուսումնասիրությունը, որը, սակայն, որոշակի բարդություն է ներկայացնում թանգարանային ֆոնդերի սահմանափակ մատչելիության պատճառով, իսկ ցուցադրվող նմուշները և ազգային տարազների նկարագարը այբովներն ամբողջական պատկերացում չեն տալիս ֆոնդերում առկա հավաքածուների մասին»¹¹:

Ն. Կամինսկայան իր աշխատությունում տեղին է ակնարկում այն մասին, որ տարազի պատմության ուսումնասիրության հիմնական աղբյուր են կերպարվեստի և կիրառական արվեստի, ճարտարապետական, գրական ստեղծագործություններն ու պատմական փաստաթղթերը, որոնք նկարագրում են դարաշրջանի կենցաղն ու նյութական մշակույթը¹²:

5. Հայկական տարազ: Հայկական ժողովրդական տարազը ավանդական ազգային մշակույթի նշանաբանական ոլորտում է՝ որպես գեղարվեստական-ստեղծագործական արտահայտության խորհրդանիշ: Նրա պատկերավոր-ոճական

¹⁰ Эртюрк Н. Искусство костюма эпохи Османской империи XVI-XVIII вв. (Автореф. дисс. на соискание ученой степени канд. искусствоведения, М., 2005, с. 5).

¹¹ Шатковская М. Л. Формирование элементного базиса прототипов при проектировании одежды на основе народного костюма (Автореф. дисс. на соискание ученой степени канд. технических наук, СПб., 2009, с. 6).

¹² Каминская Н. М. История костюма, М., 1977, с. 5.

կառուցվածքում ծավալուն և տեսանելի արտացոլում են գտել ժողովրդի էթնիկ-կրոնական, բարոյագիտական, գեղարվեստագեղագիտական պատկերացումները, նրա պատմությունը, մտածելակերպը, արժեքային համակարգը, հոգևոր և նյութական մշակույթի մակարդակը: Քանի որ հայկական ժողովրդական տարազը ձևավորվել է հազարամյակների ընթացքում սոցիալ-տնտեսական, մշակութային-պատմական, բնաաշխարհագրական գործոնների անմիջական ազդեցության ներքո, դրանում առավել ամբողջականորեն է կուտակված էթնոսի սոցիալ-մշակութային փորձը, որը՝ որպես հատկանշական ծածկագիր, նշանաբանական հա-մակարգի միջոցով փոխանցվում է սոցիումին: Դա ժողովրդական մշակույթն ու կենցաղը, էթնիկ-մշակութային ինքնագիտակցությունը, ժողովրդի մտածելակերպը, ավանդական գեղարվեստական ստեղծագործության բնութագրերը, ամբողջությամբ վերցրած՝ ազգի մշակութային-պատմական զարգացման գործընթացն ուսումնասիրելու լայն հեռանկարներ է բացում:

Ա. Պատրիկի հիմնարար աշխատությունում լուսաբանվում է այն իրողությունը, որ հայ ժողովրդի տարազը, անցնելով պատմական զարգացման երկար ուղի, չի սահմանափակվում լոկ ազգային նեղ շրջանակներում, քանի որ տնտեսական ու քաղաքական բազմաթիվ կապերով և իր պատմական զարգացման առանձնահատկություններով այն Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների տարազաձևերի ընտանիքի անբաժան մասն է եղել՝ աչքի ընկնելով ինքնատիպությամբ¹³:

Հայկական ժողովրդական տարազի ընկալման հիմնարար ուսումնասիրություններ, որոնք արտացոլում են հայկականի ազգային բնույթը և գծերը, դարձան Ղ. Ինճիճյանի, Վ. Հացունու, Ա. Ալպոյաճյանի, Ա. Մնացականյանի և Մխիթարյան միաբանության թողած արժեքավոր ժառանգությունը¹⁴: Այդպես նաև Ե. Լալայանի, Ա. Պատրիկի, Վ. Բդոյանի, Ն. Ավագյանի աշխատությունները և նկարիչներ Վ. Սուրենյանցի, Ա. Ֆեթվաճյանի, Ս. Խաչատուրյանի, Ե. Լանսերեյի ու այլոց ստեղծագործությունները:

Ըստ Ֆ. Գրիգորյանի, տարազի զարգացումը պայմանավորված էր համապատասխան բարձրորակ հյուսվածքների առկայությամբ, որը տարբեր տեսակի հագուստներ ստեղծելու հնարավորություն էր ընձեռում¹⁵: Այդ տեսակետից Հայաստանում պայմանները միանգամայն բարենպաստ էին: Նուրբ բուրդ ունեցող

¹³ Պատրիկ Ա., Հայկական տարազ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 1967, էջ 16:

¹⁴ Հայոց պատմության էջեր իտալացի նկարիչների գրաֆիկական աշխատանքներում (Մխիթարյան միաբանության հավաքածուից) Ե., 2007, էջ 3:

¹⁵ Գրիգորյան Ֆ., Հայկական ազգային տարազ, Ե., 2011, էջ 12:

ոչխարի բուծումը, բամբակագործությունն ու մետաքսի մշակումը նպաստում էին բարձրորակ հյուսվածքեղեն, հետևապես և տարբեր ոճի տարագներ ստեղծելուն: Խիստ կարևոր էր նաև բազմազան ու որակյալ ներկերի առկայությունը, որոնց մեջ առանձնանում էր հայկական անգուգական որդան կարմիրը:

Հայաստանի շատ բնակավայրերում կային հյուսվածքների բազմաթիվ վարպետներ, որոնք կարողանում էին ոչ միայն բավարարել ներքին շուկայի պահանջները, այլ նաև վաճառքի նպատակով արտասահման, այդ թվում և եվրոպական երկրներ ուղարկել մեծ քանակությամբ կտորեղեն, հատկապես բամբակե հյուսվածքներ, ոսկեթել ճոխ դիպակներ, շալ կտոր և այլն: Առանձնապես հայտնի էր Թոխաթում արտադրվող կտորը, որը եվրոպական երկրներում համարվում էր «արևելյան կերպաս»: Կարևոր էր նաև ներմուծված հյուսվածքեղենի առկայությունը: Դեռ հնագույն ժամանակներից հայ վաճառականները կտորեղեն էին բերում Ասորեստանից, Բաբելոնից, իսկ ավելի ուշ՝ Բյուզանդիայից, Իրանից, Հնդկաստանից, Չինաստանից (հայտնի մետաքսի ճանապարհով): XVIII դարից Հայաստան էր հասնում նաև ռուսական քաղաքներում գործված կտորեղենը:

Հազարամյակների սահմանագծին տեղի ունեցող համամարդկա-յին արժեքների հիմնարար նշանակության գիտակցումը ոչ մի կերպ չի նսեմացնում որևէ ժողովրդի ձգտումը՝ պահպանել իր անկրկնելի մշակույթը, ամրագրել դրա յուրահատկությունները, այդ թվում նաև հագուստում: Չնայած սոցիալական գործընթացների հարաշարժությանը, նրանց միօրինակացմանը և միակադապարացմանը, միննույն ժամանակ նկատելի է էթնիկական նյութական և հոգևոր արժեքների հանդեպ ուշադրության մեծացում: Այդ իմաստով, ավանդական հագուստը, որն առկա է ավանդույթների, վարվեցողության էթնիկական կարծրատիպերի տարածման գործընթացում, այս կամ այն մշակույթի արժեքային համակարգի էթնիկական նույնականացման և պահպանման կարևոր գործոն է:

Տարբեր ժամանակաշրջանների տարագի պատմությունն ուսումնասիրելիս, պարզվում է, որ դրանցից յուրաքանչյուրն արտացոլում է իր պատմական առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ պահպանելով նախորդի կենսունակ հատկանիշները: Նորը փնտրելիս և այն հնի մեջ գտնելով, ոչ թե պարզապես պատճենվում և մեքենայաբար կրկնվում է հինը, այլ՝ սովյալ ժամանակաշրջանի աշխարհընկալմանը համապատասխան, հաշվի առնելով մարդու մարմնի կառուցվածքային պահպանողականությունը՝ անկախ ժամանակից, ի հայտ է գալիս տարագի մի նոր տարր՝ իր նոր բովանդակությամբ:

Հատկապես հոգևոր և նյութական կյանքի բնականոն միա-ձուլումն է օժանդակել հայկական ժողովրդական տարագի ամբողջական գեղարվեստական ու ներդաշնակ

գուգակցության ձևավորմանը՝ զծերի, հարթությունների և ծավալների օրինաչափ ռիթմով, կառուցվածքների և դեկորատիվ լուծումների համադրությամբ, սպառողական և գեղագիտական արժանիքների միասնությամբ: Դա պայմանավորված է նրանով, որ ժողովրդական տարազը բազմաթիվ սերունդների կոլեկտիվ աշխատանքի արդյունք է, որն ընդգծում է հագուստի սոցիալ-մշակութային գործառույթները՝ մարդուն հնարավորություն տալով ընդգրկվել սոցիումի տարածք:

Ցավոք, ժողովրդական հագուստի պատկերավոր-ոճական կառուցվածքի բազմակողմանի վերլուծության մեթոդաբանության անկատարությունը՝ նրա դերի և նշանակության, անցյալի և ներկայի համապատկերում, որպես նյութական և հոգևոր մշակույթի «հուշարձան», էթնիկ-մշակութային խորհրդանիշ, խոչընդոտում է հայկական քաղաքակրթության նշանաբանական «սոցիալական ծածկագրի» վերծանման գործընթացը, համամարդկային արժեքային համակարգում նրա գեղարվեստական-գեղագիտական բովանդակության հաստատումը, ինչպես նաև այլ էթնիկական մշակույթների հետ ստեղծագործական համագործակցության աշխարհագրության ընդլայնումը:

НАЦИОНАЛЬНЫЙ КОСТЮМ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

ГАРИБЯН Д. Л.

Резюме

Рассмотрение содержательно-инвариантных характеристик феномена костюма дает возможность выявить и определить утилитарные и символические функции, а также особенности этого сложного явления культуры.

Национальная традиция являет собой атрибут культуры, а костюм - это национально-культурный феномен, уникальный фактор, подтверждающий национальную самобытность. Как культурно-ценностная парадигма армянский народный костюм имеет свои предметные, символические, генеалогические, исторические и этнографические характеристики.

В контексте взаимодействия подсистем бытия—"природа-общество-человек" национальные костюмы претерпевают определенные изменения, что посвоему отражается в культуре, которая, в свою очередь, влияет на последующую трансформацию символической сути национальных костюмов.

THE NATIONAL COSTUME AS AN IMPORTANT COMPONENT OF THE CULTURAL HERITAGE

D. GHARIBYAN

Abstract

The identification of content-invariant characteristics of the phenomenon of costume makes it possible to clarify and determine the ensemble of utilitarian and symbolic functions of the costume, the specificity of that complex cultural phenomenon, and its features of action.

In the context of cultural studies, in art research done from the viewpoint of “systemic approach” only a fragmentary place is given to the National Costume.

From conceptual point of view, culture is seen as a self-organizing system, which, in its turn, is a peculiar variant of social self-organization. The paradigm, where the study of methods and principles of history of culture is seen from the viewpoint of synergy is promising and valuable.

An attempt was made to introduce the commonalities and features, the structural-functional characteristics, and spatial-temporal changes of the notion of National Costume in the context of the interaction of Genesis subsystems - “nature-society-man.”

The national tradition is substantiated as an attribute of culture, whereas costume as a national-cultural phenomenon, a unique factor confirming the national identity, as a form of applied arts. Armenian folk costume as a paradigm of cultural values is highlighted.

The significance of costume’s symbolic, geneological, historical and ethnographic characteristics is stressed as well. A comparison is made in accordance with the regularities and trends of development of culture’s other branches in the context of changes of historical eras.

The National Costume, being changed over time, renders a peculiar influence on art in general, and on culture in particular; and vice versa, the latter leave their impact on the subsequent transformation of the National Costume and the transmission, imitation and distribution of its symbolic essence.

It is noted in conclusion that in the framework of the problems and questions raised above it is necessary to carry out a more in-depth and systemic study, as well as rigorous and evidence-based research.